«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք.Երևան 0046, Բագրատունյաց 44, Հեռախոս 011 51 49 92, Էլ.փոստ՝ eltransport@yerevan.am

№ 313 01 հունիսի 2026թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«ՇԻՆՊՐՈ» ՍՊԸ-ի, տնօրեն Ա.Հարությունյանին

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի (այսուհետ Գնորդ) և «ՇԻՆՊՐՈ» ՍՊԸ-ի (այսուհետ Վաճառող) միջև 2026թ. ապրիլի 13-ին կնքվել է ապրանքի մատակարարման № ԵԷՏ-ԳՀԱՊՁԲ-26/14-2 ծածկագրով պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է Գնորդին մատակարակել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող № 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով և մատակարարման ժամանակացույցով նախատեսված ապրանքները:

«ՇԻՆՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է պայմանագիրրի Հավելված 1-ի 4-րդ և 5-րդ չափաբաժինների ապրանքները, սակայն անպատշաճ որակի՝ չի համապատասխանել տեխնիկական բնութագրի նկարագրին ու Վաճառողը բանավոր հայտարարել է, որ չի կարող փոխարինել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով պայմանագրի 2.1.7 կետով՝ միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը և 2.1.7.1 կետի ա ենթակետը՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, հայտնում ենք Ձեզ, որ Գնորդը հրաժարվում է վերը նշված պայմանագիրրի Հավելված 1-ի՝ 4-րդ և 5-րդ չափաբաժինների ապրանքներից և միակողմանի լուծում է պայմանագիրրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք Ձեզ, որ Վաճառողին տրվում է 10 օրացուցային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ 9 750 (ինը հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամի և 6 500 (վեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով փոխանցել Գնորդի բանկային հաշվին ՝«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, ՀՀ 1150008870220100:

Սահմանված ժամկետում գումարը չվճարելու դեպքում, հիմնվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետին Պատվիրատուն «ՇԻՆՊՐՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը կներկայացնի լիազոր մարմին:

Տնօրենի ժ/ա՝ **Ս.Բեջանյան**